Գիտ Խաչի եւ Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ անլամակոչութեան տօնին առիթով, հանդիսաւոր Ս. պատարագ պիտի մատուցուի Կիրակի, 26 Շոկտեմբեր 2003ին:

Պիտի պատարագէ եւ քարոզ՝ գերծ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Շայոց)

Սկիզբ ժամերգութեան ժամը 8:00ին  
Ս. պատարագ ժամը 9:30ին  
Քարոզ ժամը 11:00ին  
Մատաղօրհներ ժամը 12:00ին

Զարբաթ, 25 Շոկտեմբեր 2003ի կէսօրէ ետք ժամը 7:00ին պիտի կատարուի հսկումի արարողութիւն:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ ըլլալու Եկեղեցւոյ անուանակոչութեան հոգեպարար եւ հանդիսաւոր արարողութեան:

**ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ**

# Մանկապատանեկան

## ՀՍԿԱՅ ՊՏՈՒՂ ՄԸ



20 քիլո կշռող պտուղ մը կրնա՞յ գոյութիւն ունենալ: Ինչո՞ւ ոչ:  
Ծանօթանանք ջՅՐ-դրումին...

Ջրդրումը արեւի եւ ջրի շնորհիւ պէտք ունի: Ան տարին անգամ մը կը բուսնի: Անոր հատիկները հողին մէջ կը դրուին Մարտին, եւ հինգ ամիս

ետք ջրդրումը պատրաստ կ'ըլլայ քաղուելու: Ան նոյնիսկ պարարտացուցիչի նուազագոյն քանակով սքանչելիօրէն կ'աճի: Ան կրնայ մինչեւ 1,5 քիլո մեծնալ ամէն օր: Անհատաւի՞ր, բայց իրաւ:



Ջրդրումը ունի գարմիկ մը, նարնջագոյն ջրդրումը, որ ալ աւելի լուս է: Ան միայն 20 ջերմութեամբ կը հայտնաբերուի 100 կրամին: Հետեւաբար ան չի դիրքներ: Ան շատ հարուստ է

բնաթելերով, որոնք կը դիւրացնեն մարսողութիւնը: Իսկ իր 14 հանքային նիւթերով եւ 10 կենսանիւթերով ան մեր առողջութեան պահպանիչն է, յատկապէս՝ ձմռան: Անոր մէջ գոյութիւն ունեցող փրփուիթամից Ա.ը անոր գեղեցիկ նարնջագոյն գոյն կու տայ եւ մեր ալ դիմադրողականութիւնը կը գործադրէ:

Հետեւաբար դուն զայն պիտի ուտես աղի՞, թէ շաքարոտ:


### ԳԻՏԵՒՐ, ԹԵ...

• Ջրդրումը ծագած է Հարաւային Ամերիկայի մէջ: Ան շատ կը սիրէ արեւը եւ տաքութիւնը: Անոր լայն տերեւները հովանոցի մը նման կը ծածկեն պտուղը, որ կը մեծնայ գետինը պառկած... Իր ծանրութեամբ պատճառով:


• Ջրդրումի ամէնէն հին հատիկները գտնուած են Անտեան լեռներուն մէջ եւ մեզի հասած են Ն. Ք. 5000 թուականէն:

• Նարնջագոյն ջրդրումը աշխարհի ամէնէն մեծ բանջարեղէնն է: Ամերիկացի ազարակապան մը կըրցած է անցնել 630 քիլո կշռող ջրդրում մը, Հոկտեմբեր 2001 թուականին: Մինչ ամէնէն մեծ «պարզ» ջրդրումը կըրցած է հասնել «միայն» 495 քիլոյի:

## ԻՆՉՈ՞Ւ ԶԵՆՔ ԿՐՆԱՐ ՄԵՆՔ ԶՄԵՉ ԽՏՂՏԱՅՆԵԼ




• Նուտղալու զգացումը նման է անգանգի մը, որ ուղեղին կ'ընէ՝ «Ուշադրութիւն, բան մը կը պտտի մորթիդ վրայ»: Եթէ բարեկամ մըն է, որ մեզ կը խտրացնէ, ասիկա խնդուք կը յառաջացնէ, որովհետեւ մենք գիտենք, թէ ասիկա վտանգաւոր չէ: Սակայն, օրինակ, եթէ միջատ մը նոյնը ընէ, մենք անակնկալի պիտի գանք, պիտի ցատկենք եւ մեր վախէն պիտի պոռչտանք: Երկու պարագաներուն ալ այս զգացումը շատ զօրաւոր հակազդեցութիւն մը պիտի յառաջացնէ:



• Եթէ մենք զմեզ խտրացնենք, մեր ուղեղը կը դեկավարէ այս զգացումը յառաջացնող շարժումները: Հետեւաբար ան «անգանգի» պէտք չունի: Ան կը թեթեւցնէ խտրական զգացումը եւ ոչ խնդուք, ոչ ալ պոռչուտեք կը յառաջացնէ: Այս ձեւով է, որ մեր ուղեղը կը թեթեւցնէ բոլոր զգացումները որոնք կը յառաջանան մեր անձնական շարժումներէն:


### ԶԵՆԱՅԻՆ ԱՃԽԱՏԱՆՔ

#### ՎՆՈՒԿԻՆ ԳԼԽԱՐԿԸ



Կարելի չէ հաշուուի՞ր տօնել առանց վիուկի գլխարկին...

... Իսկ այս գլխարկը անշուշտ պէտք է չինել սեւ խաւաքարով:  
1) Խաւաքարտին վրայ գծէ գլխարկին վարի բաժինը: Մեծ կլորները գծելու համար կրնաս գործածել դերձան մը, որուն մէկ ծայրը պիտի կայես մատիտ մը: Դերձանին միւս ծայրը մատովդ հաստատուն բռնէ թուղթին վրայ, եւ պարանին վրայ թեթեւօրէն քաշելով մատիտով թուղթին շուրջ դարձիր կլորը գծելով: Սկիզբը գլխուղ մեծութեամբ կլոր մը գծէ, ապա՝ քիչ մը աւելի մեծ կլոր մը: Կեդրոնի կլորը կտրէ:  
2) Նոյն ձեւով գլխարկին վերի բաժինը գծէ, սակայն՝ պարանին ծայրը դնելով խաւաքարտին անկիւնը եւ մէկ-երրորդ կլոր մը գծելով:  
3) Այս գլխարկի վերի մասին վարի կէս կլոր ծայրը ակուաններու նման կտրտէ եւ զայն դէպի դուրս դարձուր: Չայն ծայրէ կոնի ձեւով եւ փակցուր: Դէպի դուրս դարձած ակուաններուն վրայ գորաւոր խէժ դիր, կոնին



վրայ անցուր կլորակ խաւաքարտը եւ զայն ակուաններուն վրայ փակցուր:  
4) Կրնաս գլխարկի գարդարել գունաւոր խաւաքարտէ տարբեր ձեւեր կտրելով եւ վրայ փակցնելով:

### ՀԵՌԱԶԱՅՆԻ ԲԱՆՏԱԲԵՐ ԹԻՒԸ

Չինացիները 8 թիւը կը նկատեն բախտաբեր, որովհետեւ այս թիւը կ'արտասանուի «հարուստ» նշանակող գաղափարագիրին հնչիւնին նման:  
Այս պատճառով է, որ աճուրդի մը ընթացքին հեռաձայնի 8888-8888 թիւը ծախուած է 25 հազար եւրոյի: Չայն գնած է չինական օդանաւային ընկերութիւն մը, որ այս թիւը պիտի գործածէ թռիչքներու մասին տեղեկութիւններ տալու եւ տեղեր ապահովելու նպատակով կատարուած հեռաձայնային կապերուն համար:

**ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԴՊՐՈՑ ՎԵՐԱՄՈՒՆ**


- Դասուցարայքիտը կը սկսիս  
→ Ռբար 31 հոկտեմբեր՝ ժամը 16-18  
→ Եաբար 1 Նոյեմբեր՝ ժամը 10-12  
և 12-14
- Արջանագրութիւնիտը կը շարունակուի  
(Լուս Եանք Կիրոս, Պարեհ Կամուր)

01 265899  
01 249375


**«ԱԶԴԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒԵՐԸ**

«ԱԶԴԱԿ»-ի հետ կապուելու համար հետաձայնել հետեւեալ թիւերուն:-  
258526, 260115 եւ 241274:



### Ժ Ա Մ Ա Ն Ց



Կրնա՞ս իւրաքանչիւր եակի վերադարձնել իրեն պատկանող անջրպետանաւը:



Կրնա՞ս գտնել վիուկին համապատասխանող շուրջ:



Կրնա՞ս գտնել երկու պատկերներուն միջև գոյութիւն ունեցող տասը տարբերութիւնները:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓԵՆԱՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԳՈՒՆԵՐԶՈՒԹԻՒՆ

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ



Լիբանանի մէջ մշակութային անախընթաց նախաձեռնութեամբ մը, ՊԻԷԼԻ մէջ «Արթիստ» կը կազմակերպէ նկարչական հաւաքական ցուցահանդէս-փառատունը, որ կը կրէ «Սալոն տէ Կ'արթիսթէնտֆանտան» խորագիրը:

Յուցադրուած գործերն ընտել մը («Մարշտ ֆլէտթ», գործ՝ Խաւիժ Էզզետտին)

տաղէտներու այս փառատունը մէջ կան վերջերսն է համաբար տիրացած անուններ, ինչպէս նաեւ՝ տակաւին սկսնակ արուեստագէտներ:

Հսկայական տարողութիւն ունեցող հաւաքական այս ցուցահանդէսը հարուստ է իր ծիրին մէջ իրենց գործերը ցուցադրող արուեստագէտներուն ստեղծագործական այլապահանջները:

Հոն կան արուեստի բազմաթիւ ուղղութիւններու պատկանող գործեր, որոնք պահելով հանդերձ արուեստագէտներուն ստեղծագործական ապատուութիւնը, ունին կեդրոնական մէկ թեմա՝ Լիբանանը:

Այլ խօսքով, «Սալոն տէ Կ'արթիսթէնտֆանտան» համապատկեր մըն է իբրանանէան ժամանակակից կերպարուեստին: Հետաքրքրական է նաեւ, որ հաւաքական այս ցուցահանդէսը թանկ արարանային անկիւն մը յատկացուցած է իբրանանցի վաստակաւոր արուեստագէտներու գործերուն, որոնք միատեղուած են անհատական հաւաքածոներէ փոխառնութեամբ: Անոնցմէ նշենք Արէֆ Ռայէսի, Հիւսէյն Մատիի, Նատիա Սայրալիի եւ Սայիպա Տուէյիի անունները:

«Սալոն տէ Կ'արթիսթէնտֆանտան» ցուցահանդէսը կարելի է այցելել երեկոյեան ժամը 4:00էն մինչեւ զիշերուան ժամը 10:00:

**ՕՆԵՐԻՆԵՐ**

ՀԱՐԱԹ,  
25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003  
**ՊԷՅՐՈՒԹ**  
ՄԱՍԱՄ ԱՄՊՈՏ  
**ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ**  
ՅԵՐԵԿ՝ 29°C  
ԳԻՇԵՐ՝ 22°C  
**ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝**  
56%



**bezdig\_mezdig@hotmail.com**

### ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամանշիջներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	28,65 - 28,85 լ.ն.
Քուէյթեան տինար	5125,00 - 5150,00 լ.ն.
Յորդանանէան տինար	2121,00 - 2131,00 լ.ն.
Պահրէյնէան տինար	3986,00 - 4011,00 լ.ն.
Ա.Մ.Էմիրութեան տինար	410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան ռիալ	413,75 - 415,75 լ.ն.
Սէուտական ռիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանէան ռիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կինէ	220,00 - 230,00 լ.ն.
Անգլիական սթերլին	2555,00 - 2565,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1148,00 - 1153,00 լ.ն.
Թրքական լիրա	101,00 - 101,50 լ.ն.
Կիպրական փաունտ	3035,00 - 3060,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն	13,65 - 13,75 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1150,00 - 1155,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	1054,00 - 1059,00 լ.ն.
Եւրօ	1778,00 - 1788,00 լ.ն.

● **ՈՍԿԻ**

Անգլիական մէկ ոսկի	148,500 - 153,500 լ.ն.
Իրանէան մէկ ոսկի	134,500 - 139,500 լ.ն.
Օմանէան մէկ ոսկի	124,000 - 129,000 լ.ն.
Մէքսիկական փէսոս	731,000 - 733,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	18,600,000 - 18,800,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	385,80 - 386,30 Ս
Մէկ օնս արծաթ	5,15 - 5,17 Ս

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.1792 - 1.1796
Քանադական տոլար	1.3062 - 1.3067
Չուիցերիական ֆրանք	1.3115 - 1.3120
Ճափոնական եէն	109.41 - 109.46
Մէկ սթերլին	1.6960 - 1.6964

Մէկ փոլար 580 դրամ

● ՍՈՆԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիճի Ա. ճշդում Գիճի Բ. ճշդում

Ա. կարգ	4,24	4,24
Բ. կարգ	-	-

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՈ. 01-252852

**ԱՅՆՃԱՐ** **ԱՅՆՃԱՐ**

ՀԱՌԻՐՏ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003,  
Այնճարի Ս. Պօղոս Եկեղեցու մէջ

հանգուցեալ բարերարներուն՝  
**ՄԻՀՐԱՆ, ԶԱՊԷԼ ՀԱՌԻՐՏ ԵՒ  
ԼԵՅԼԱ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ**ներու

Յիշատակին

Սիրով կը հրահրենք բոլոր անոնք, որոնք  
կը փափաքին յարգել մեր բարերարներու  
յիշատակը:

**ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**Հ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

ԱՆԻ ԿԻՎԼԷԶԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003, Նոր Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ՀԱԼԷՊ** **ՀԱԼԷՊ**

**ԽՈՐԷՆ ԱԶՆԱՌՐԵԱՆԻ** մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 2 Նոյեմբեր 2003, Հալէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ՀՐԱԶ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ** մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003, Նոր Մարտիկ Սրբոց Բառասնից Մանկանց Եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ԵՐԱՆԻԿ ՏԱՂԵԱՆԻ** մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003, Ժուհիէի Ս. Յարութիւն Եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ՍՕՍԷ ՍԵՓԷՃԵԱՆԻ** մահուան Ե. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5574**  
**Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱՋԱՐԵԱՆ**

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

**ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ** **ՈՒՂԱՆԱՅԵԱՑ**

1. Հայոց կաթողիկոս Յակոբ Ե.:	1. Անուշահոտ փոքր սեխ - Ախոռ:
2. Ճարակատեղի Ջնջել:	2. Եգիպտահայ օրաթերթ - Եղանակ:
3. Շերամի թել - Ոգելից ըմպելի:	3. Շրջակայ - Ճափոնական օդանավային ընկերութիւն մը:
4. Գիւղաքաղաք - Անձնական դերանուն:	4. Կիլիկեան քաղաք - Իզական օտար անուն:
5. Կարծր փայտով ծառ - Ռամկօրէն՝ այրի:	5. Պատնէշ:
6. Յուցական անական - Թաքուն պայթուցիկ:	6. Արական օտար անուն:
7. Էակ - Բրտոն:	7. Դրկից տառեր - Ամերիկեան ջրվէժ:
8. Շաղկապ - Միջերկրականեան երկիր:	8. Արդարեւ - Կտակցութեան տուող բոյս:
9. Բուսական հիւթ մը - Զօրաբարէլի որդին:	9. Իւղ - Աշուղ Արմենակ Մարկոսեան:
10. Չոր - Վանայ լիճի հիւսիսը գտնուող լեռ (հակ):	10. «Նահապետ» գրչանունին տէրը - Շրջուած՝ կաթսայ:

1 2 3 4 5 6 7 8 9 10  
1 Մ Ա Ջ Ե Կ Ա Մ Ա Ս  
2 Ի Բ Ա Ն Ի Ո Ր Ն Ի  
3 Հ Ա Ր Թ Ս Ր Բ Ա Ն  
4 Բ Կ Ա Ղ Ա Մ Ա Ր  
5 Ա Ն Ա Կ Ա Ն Ա Ն Մ  
6 Ն Ի Ջ Ա Կ Գ Ե Ն Ի  
7 Մ Ա Յ Թ Ս Ա Ն Ա  
8 Ա Ո Ի Շ Տ Ի Վ Ս  
9 Ա Ն Ա Գ Ս Մ Վ Ս  
10 Ճ Կ Ի Ս Կ Ա Ս Ա Ր

**Թի 5573**  
**ԽԱՉԲԱՌԻՆ**  
**ԼՈՒԹՈՒՄԸ**

### ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

**ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)**  
Եթէ առեւտրական չէք, բերեւ կորսնցնէք տնտեսական յաւելեալ շահի առիթ մը: Օրը կը բեւադրէ մնալ արթուն, որպէսզի չտուժէք նիւթապէս եւ բարոյապէս:

**ՅՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս)**  
Քաղցրութիւն եւ ուշադիր հոգատարութիւն՝ սիրած անձին նկատմամբ: Օրը շատ յարմար է ուրախ ժամանակ անցընելու: Օգտուեցէք առիթէն, որովհետեւ այսպիսի օր միշտ չէք կրնար գտնել:

**ԵՐԿՈՒՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)**  
Բազմաանակ առաջարկներ կը ներկայացնեն ձեզի, բայց դուք պիտի հետեւիք ձեր ընտրած ծրագիրին: Ամէն պարագայի, թիչ մը ամէն տեղ պիտի գտնուիք այսօր:

**ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս)**  
Սիրալիր հանդիպում մը հաւանական է. պատրաստ եղէք ընդունելու անակնկալ հրաւեր մը: Եղէք նկուն եւ հանդիսօս, որպէսզի ուրախ մնաք ձեր խօսակիցներուն հետ:

**ԱՌԻԻԾ (24 Յուլիսին 23 Օգոստոս)**  
Ձեր ընտանիքին անդամներով պիտի շրջապատուիք՝ ուրախ ժամանակ անցնելով: Գիտեցէք արժէքը նման մթնոլորտի, որ միշտ չի կրնար պատահիլ: Օրը պիտի անցնի զուարթ:

**ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)**  
Այս իրիկուն արգիլուած է ձեզի տունը մնալ: Բարեկամներով գացէք ձեր նախընտրած վայրը, որպէսզի ուրախութեամբ աւարտէք շաբաթը: Նոյն ատեն խնայողութեամբ ծախսեցէք:

**ԿՇԻՌԻՔ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)**  
Եթէ արուեստագետ էք, ուշադիր եղէք, որ առիթները օգտագործէք: Պիտի ունենաք հետաքրքրական հանդիպում մը անձի մը հետ, որ ձեզի պիտի հայրապարէ եկամուտի նոր աղբիւր մը:

**ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)**  
Ամուսնանալ ամէնէն գեղեցիկ օրն է այս: Ձեզ պիտի շնորհաւորեն ձեր հմայքին եւ ձեր ձեռնհասութեան համար: Օրը փայլուն է նիւթապէս եւ բարոյապէս:

**ԱՆԵՂՆԱՌՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)**  
Դուք ձեզի հանգիստի օր մը շնորհեցէք միանալով ձեր սիրած անձներուն: Մեկուսացած մի մնաք, այլ ձեր հարազատներով գուարեացէք: Օրը բախտաբեր է:

**ԱՅԾԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)**  
Պիտի կարենաք յաջողցնել ձրագիր մը, գոր կը նկատուիք անիրագործելի: Օրը նպատակաւոր է ձեր որոշած աշխատանքները իրագործելու: Ձեր աշխատանքը պիտի գնահատուի:

**ՄՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարին 19 Փետրուար)**  
Եթէ ուսանող էք, ձեր աշխատանքը արդիւնաւետ պիտի ըլլայ: Եթէ գործի մարդ էք, դարձեալ պիտի ունենաք շահաւետ գործառնութիւն մը: Օրը ուրախ պիտի անցնի:

**ՉՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)**  
Բոլոր մոլորակները ի նպաստ ձեզի պիտի ստեղծեն շահաբեր եւ ուրախ օր մը: Այս կը նշանակէ, որ ամէն ինչ ընելու իրաւունք ունիք եւ ժպիտ պիտի քաղէք բոլորէն:

**ԱԶԳԱԿ** **50 ԵՆԵՐԻ ԵՄՈՒՄ**

25 Հոկտեմբեր 1953

### ՅԻՐՈՒՅԱՆ ՀԱՅԵՐ՝ ՅԻՐԱՍԱՅԻ 17 ԳԻՒՂԵՐՈՒՆ ՄԷՋ

Թղթակից մը «Յառաջ» մէջ (16 Հոկտեմբեր) կը գրէ.

Թերեւս ոչ մէկ նահանգի կամ շրջանի մէջ այսքան ցրուած են հայերը, որքան այս վարչկա նահանգին մէջ: Ո՛չ Փարիզը իր շրջանակներով, ոչ Միջին Ֆրանսան եւ ոչ ալ Մարսելի շրջանը:

Քաղաք տեղեկութիւններու համաձայն, այս նահանգի լայնքին ու երկայնքին մէկական կամ երկուական ընտանիք միւնչեւ 25-30 ընտանիք կը գտնուի հետեւեալ 17 քաղաքներուն, գիւղերուն ու անցներուն մէջ.

Նահանգի կեդրոնը՝ Աւիյոն, Օրան, Պոլէն, Փոնրէ, Մոնֆրակ, Ս. Մարտին. Լէ Կ'Աւիյոն, Կրոմէլ (աւան), Լիյ սիւր Սորկ, Ֆոնրէն տը Վոքլիւզ, Կայաս (աւան), Քաւայեան, Ափր, Փերրուի, Միլապո, Լա Թուր տ'էկ, Լա Մոտ տ'էկ եւ Պար

Թալաս կոչուած վայրը՝ Ռոն գետի կղզեակին վրայ: Կան տակաւին ուրիշ տեղեր ալ, սակայն ես չկրցայ ասկէ անխիճ ճշդել:

Այս 17 վայրերուն մէջ գտնուած հայերուն քիւր կը հասնի շուրջ հարիւր հոգիի, որոնց կէսը անպայման հոս ձեռնները կը կազմեն, ապրիլեան սերունդի զաւակներ:



Ամէնէն շատ ընտանիքներ կան Փոնրէ եւ Պոլէն, 25-30 տնուր, իսկ մնացած վայրերուն մէջ մէկէն միւնչեւ 5-10 ընտանիքներ կան:

Ինչպէս ամէն շրջան, այս վայրերուն մէջ ալ ամէն ասպարէզի մէջ աշխատողներ կան, ինչպէս եւ առեւտրականներ, մասնաւորապէս՝ շրջուն: Սակայն ջախջախիչ մեծամասնութիւն կը կազմեն բանուորները, որոնք առհասարակ կ'աշխատին կղմիւտի եւ բուրդի գործարաններուն, նաեւ շինութիւններու եւ դաշտերու մէջ:

**ԱՅՍՈՐ՝ 25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ**

■ 1967 - Սահ մանկավարժ եւ գրագետ Եղուարդ Տարոնեանի:  
■ 1993 - Արցախեան ուժեր Ֆիզուլիէն դէպի հարաւ շարժելով կը հասնին մինչեւ Արաք գետ, որ կը գծէ Արարիկ-Իրան սահմանագիծը:

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



## ՃԱՏՐԱԿԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ

Երիտասարդությունը եւ մարմնակրթության նախարար Սեպուհ Յովնանեան երէկ նախարարութեան իր կեդրոնատեղիին մէջ ընդունեց Լիբանանի ճատրակի ֆետերասիոնին մէջ պատուիրակութիւնը, գլխավորութեամբ՝ նախագահ Օմար Հուրիի: Անոր կ'ընկերակցէին ֆետերասիոնի անդամներ էլի Հուրիեան եւ Ալի Հայտար:

Պատուիրակութիւնը նախարար Յովնանեանի շնորհակալութիւն յայտնեց ճատրակի մարզին հանդէպ իր ցուցարեւոյթ յատուկ հոգատարութեան եւ քաջայերանքին համար:

Ապա պատուիրակութիւնը նախարար Յովնանեանի յանձնեց յատուկ յուշանուէր մը:

### ԹԵՆԻՍ. ՍԷՆ ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

## ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱՍԱԻ ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆԻՆ

Ս. Փեթերսպուրկի մէջ (Ռուսիա) տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարքին, քառորդ աւարտականին իր կատարած մրցումին, երէկ հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան 6 - 3 եւ 6 - 1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք գերմանացի իր մրցակիցը՝ Լարս Պուրկսմիլըրը, ապահովեց կիսաւարտական հանգրուանին իր տոմարը:

Բ. հանգրուանին իր կատարած մրցումին, Սարգսեան 6 - 3 եւ 6 - 2 արդիւնքով պարտութեան մատնեց ռուս իկոր Անտրիբելը:

### ՔԱՆՉԻՑ

## ԻՆԹԵՐ - Ա. ԷՍ. ՌՈՍԱ ԳԱԳԱԹԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյանութեան (Ֆալչո) 7րդ հանգրուանի մրցումներուն, բոլորին ուշադրութիւնը պիտի կեդրոնանայ վաղը՝ Կիրակի, «Սան Սիրո»ի մէջ տեղի ունենալիք մրցումին, ուր Ինթեր Միլան պիտի հիւրընկալէ Ա. Էս. Ռոման:

Ստորեւ՝ 7րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուսի ժամով):

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Սիենա - Լեչէ	19:00
Էմպոլի - Բիելո	21:30
<b>ՎԱՂԸ</b>	
Եուվեթուս - Պրեշիա	16:00
Լացիո Ռոմա - Պոլոնիա	16:00
Փարմա - Մոտենա	16:00
Փերուցիա - Ռուսինո	16:00
Ռեցինա - Անցոնա	16:00
Սամպորիա - Ա. Սէ. Միլան	16:00
Ինթեր Միլան - Ա. Էս. Ռոմա	21:30

### ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ԱՅՍՕՐ՝ Ե. Ս. Ը. Ս. - ՍԱՖԱ

Լիբանանի ֆուտբոլի ախոյանութեան 3րդ հանգրուանին, Հ. Ս. Ը. Ս. ախոր եղանակի իր առաջին մրցումը պիտի կատարէ Պուրճ Համուտի Բաշապետարանի դաշտին վրայ, հիւրընկալելով Սաֆան:

Ստորեւ՝ 3րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ԱՅՍՕՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Ահտ - Սաֆա	4:00	Ահտ
Թատմոն Սուր - Հ. Ս. Ս.	4:00	Սուր
Հ. Ս. Ը. Ս. - Սաֆա	4:00	Պ. Համուտ
Մապարա - Նըթմէ	7:00	Սայտա
Շապապ Սահէ - Անսար	8:30	Մարգական Աւան
<b>ԵՐԵՔՇԱՐԹԻ</b>		
Օլիմպիք - Սալամ	8:30	Պէյրուս

### ՅՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ՍԱՐՍԷՅ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅ ԳՐԱԻԵԼ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Յրանսայի ֆուտբոլի ախոյանութեան 11րդ հանգրուանի մրցումներուն, որոնց մեծամասնութիւնը տեղի պիտի ունենայ այսօր, Մարսէյ պիտի փորձէ մոռնալ անցեալ շաբթուան իր կրած ծանր պարտութիւնը՝ Սթրասպուրկէն (4-1) եւ անպայման երեք կէտ խել իր հիւրին՝ Ռէննէն: Յաղթանակի մը պարագային, Մարսէյ առժամաբար պիտի գրաւէ պարագլուխի դիրքը, նկատի ունենալով որ Մոնպո իր մրցումը պիտի կատարէ վաղը, հիւրը ըլլալով Սոչոյի:

Ստորեւ՝ 11րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուսի ժամով):

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Նանթ - Լիոն	18:15
Լը Մանս - Պարիս	1:00
Աժաքսիո - Փարիզ Սէն Ժերմէն	21:00
Օքսէլ - Մոնպելիէ	21:00
Մարսէյ - Ռէնն	21:00
Լանս - Լիլ	21:00
Կէնկան - Թուլուզ	21:00
Նիս - Պրոմո	21:00
Սրբապուրկ - Մէս	21:00
<b>ՎԱՂԸ</b>	
Սոչո - Մոնպո	21:45

### ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ՈՉ ՀԱՏ ՏԱՔ ՀԱՆԳՐՈՒՄՆ ՄԸ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյանութեան 10րդ հանգրուանի մրցումներուն, Մանչեսթըր Յունայթըդը, որ իր դաշտին՝ «Օլտ Թրէֆորտ»ի մէջ պիտի հիւրընկալէ Ֆուլհէմը, յաղթանակի մը պարագային պիտի գրաւէ պարագլուխի դիրքը, նկատի ունենալով որ Արսենալ իր մրցումը պիտի կատարէ վաղը, երբ հիւրը պիտի ըլլայ Չարլթընի:

Ասթոն Վիլայի պատասխանատուները յայտնեցին, որ իրենց ակումբին մաս կազմող թուրք Ալիֆայ Օզալանի հետ կնքուած պայմանագրութիւնը չեղեալ համարեցին, նկատի ունենալով որ դարձած է անգլիացի համակիրներուն թշնամին, Տէյվիտ:

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Պոլքըն - Պրիմիցիէմ	14:30
Լիվըրպուլ - Լիծ	14:30
Ասթոն Վիլա - Էվըրթըն	17:00
Չելսի - Մանչեսթըր Սիթի	17:00
Ման. Յունայթըդ - Ֆուլհէմ	17:00
Նիւքասլ - Փորթսմութ	17:00
Սաութհեմթըրըն - Պլեյքըրըն	17:00
Վուլվըր - Լայպըր Սիթի	17:00

### ՊՈՒՆՏՍԵՆԻԿԱ

## 10ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյանութեան (Պուներլիկա) 10րդ հանգրուանի մրցումներուն, ցարդ անպարտելի միակ խումբը՝ Շթուրպարթ, հակառակ անոր որ այժմ կը գրաւէ երկրորդ դիրքը, սակայն Վոլֆսպուրկի դէմ տեղի ունենալիք մրցումին յաղթանակ մը արձանագրելու պարագային պիտի գրաւէ պարագլուխի դիրքը, նկատի ունենալով որ Պայեր Լէյքըրուրն իր մրցումը պիտի կատարէ վաղը, հիւրընկալելով Պրոսիա Մէնչենցիտի:

Պայերն Միւնիխ իր մրցումը պիտի կատարէ իր դաշտին վրայ, հիւրընկալելով՝ Քայլերայտուրըրը, մինչ Պրոսիա Տրոյնտիս հիւրը պիտի ըլլայ Պոլնուի:

Ստորեւ՝ 10րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուսի ժամով):	ԺԱՄ
ԱՅՍՕՐ	
Նիւքասլ - Ֆրանքֆորթ - Քէօլն	16:30
Ֆրայպուրկ - Վերտըր Պրեմըն	16:30
Շթուրպարթ - Վոլֆսպուրկ	16:30
Հանովըր 96 - 1860 Միւնիխ	16:30
Պայերն Միւնիխ - Քայլերայտուրըրն	16:30
Հանովա Ռոտըր - Հերթա Պերլին	16:30
Համպուրկ - Շալքէ	16:30
<b>ՎԱՂԸ</b>	
Պոլնու - Պրոսիա Տրոյնտիս	16:30
Պ. Լէյքըրուրն - Պ. Մէնչենցիտի	18:00

## «ԱՐԱՐԱՏ 73» ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԹԸ...

Երէկ, Երեւանի «Հրազդան» մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ ֆուտբոլի միջազգային բարեկամական հետաքրքրական ճակատում մը, որուն ընթացքին «Արարատ-73» 3-2 արդիւնքով պարտութեան մատնեց նախկին Սորհրդային Միութեան վեթերան մարզիկներէն կազմուած հաւաքականը:

Մրցումին հինգ կոյրեր այ նշանակուեցան Ա. Կիսախաղին: «Արարատ-73»ի կոյրերը նշանակեցին Ղազարեան (16րդ), Պաղտեան (18րդ) եւ Լեւոն Իշտոյեան (29րդ), իսկ հիւր կազմին կոյրերը՝ Լէոնիտ Պուրիակ (23րդ) եւ Եւգենի Լոզնէ (26րդ):

«Արարատ-73»ի կազմէն դաշտ ներկայացան Յովհաննէս Զանգալանեան, Արկաղի Անդրէասեան, Լեւոն Իշտոյեան, Սուրէն Մարտիրոսեան, Արմէն Սարգսեան, Նորայր Մեքոպեան, Էդուարդ Մարգարով եւ ուրիշներ: Անոնց մարզիչներն էին՝ Նիքիթա Միմոնեան, Յարութիւն Քէչէճեան եւ Յովհաննէս Աբրահամեան:

ՊՈՒԼԿԱՐԻՈՑ մէջ տեղի ունեցած 17 տարեկանէն վար Եւրոպայի ֆուտբոլի կրտսերներու ախոյանութեան գտումի մրցաշարքին իր կատարած վերջին մրցումին, Հայաստանի ազգային խումբը 4-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Պուլկարիան, ապահովեց յաջորդ հանգրուանին իր տոմարը:

### ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ՎԱԼԵՆՍԻԱ - ՏԵՓՈՐԹԻՒՅ ՔՈՐՈՒՆԱ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյանութեան 8րդ հանգրուանի մրցումներուն, շաբթուան դազաթի ճակատում տեղի պիտի ունենայ այսօր, երբ պարագլուխի դիրքը գրաւող Վալենսիա, որ ցարդ անպարտելի միակ խումբն է, հիւրը պիտի ըլլայ Տեփորթիօ Քորուսայի:


Դաշտին տէրերը առաջին հերթին յաղթանակի մը պարագային պիտի գրաւեն պարագլուխի դիրքը, իսկ երկրորդ պիտի հանդիսանան առաջին խումբը, որոնք պարտութեան պիտի մատնեն Վալենսիան, այս եղանակին առաջին անգամ ըլլալով:

Ռէյալ Մատրիտ իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Ռասինկ Սանթանտէրը, մինչ Պարսելոնա հիւրը պիտի ըլլայ Սայրքալի:


Ստորեւ՝ 8րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուսի ժամանակացոյցով):

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Մալկա - Ռէալ Մարադոսա	19:30
Ռէալ Մատրիտ - Ռասինկ Սանթանտէր	21:30
Տեփորթիօ Քորուսա - Վալենսիա	23:30

ՎԱՂԸ	ԺԱՄ
Ռէալ Վալատոլիտ - Աթլետիքո Պիլպո	18:00
Էսպանիոլ - Սելթա Վիկո	18:00
Ռէալ Սոսիեդադ - Օասուուա	18:00
Ռէալ Պելլա - Ալպասթէ	18:00
Վիարեալ - Սելթա	18:00
Մալորքա - Պարսելոնա	20:00
Մուրսիա - Աթլետիքո Մատրիտ	22:00



# ԿՈՉ



Հ. Ս. Ը. Ս. իր հիմնադրութեան առաջին օրէն իսկ իր շուրջ հաւաքած է 6 տարեկանէն վեր տասնեակ հազարաւոր անձեր, որոնք աշխատած են Հ. Ս. Ը. Ս. ի մէջ, Հ. Ս. Ը. Ս. ի համար եւ Հ. Ս. Ը. Ս. ի «Բարձրացի՛ր, բարձրացուր» նշանաբանով եւ ոգիով:

Այսօր կարգը քուկդ է: Դուն ալ քու հերթիդ կրնաս մաս կապել Հ. Ս. Ը. Ս. ի սկաուտական շարքերուն եւ սկաուտական տարազ հագնիլ, սկաուտական օրէնքներ, գիտելիքներ, կանչեր եւ երգեր սորվիլ, տարիներու ընթացքին աստիճան ու պաշտօն ստանալ եւ պալ Հ. Ս. Ը. Ս. ի պահանջները, ուրախութիւնը եւ հպարտութիւնը:

Մի՛ վարանի, ուշ չէ, կ'արժէ փորձել եւ Հ. Ս. Ը. Ս. ի պահանջները-եղբայրներու միանալով ապրիլ՝ չարքաշ, նորութիւններով, խաղերով, արկածախնդրութիւններով եւ պանակալ յայտագիրներով լեցուն կեանք մը:

Հ. Ս. Ը. Ս. ի Պուրճ Համուտ մասնաճիւղի սկաուտական պաշտօնական վերամուտը տեղի պիտի ունենայ Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003ի երեկոյեան ժամը 5:00ին, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգային քուէճի շրջափակին մէջ:

Հոն եղի՛ր եւ մաս կապել՝ Հ. Ս. Ը. Ս. ին:

Հ. Ս. Ը. Ս. ի  
ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ ՄԱՍՆԱՅԻՆԻ  
ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
ԵՒ ԽՄԲԱՊԵՏՈՒԹԻՒՆ

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ ՍԻՍՈՆ ԼՈՒԻՍԵԱՆԻ մահուան քառասունըօր անթող, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003ին, առաւօտեան ժամը 10:00ին, Ե. Ս. Փրկիչ եկեղեցոյ մէջ:

Յաւարտ Ա. պատարագի, ՉԵՐՊ. Ե. ՆԱՐԵԿ. ՎՐԴ. ԼՈՒԻՍԵԱՆ ցաւակցութիւնները պիտի ընդունի Ե. Ս. ի սրահին մէջ:

Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

# Կը ներկայացնեն՝

# ԱՌԼԱԷ

## ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ




Նոյեմբեր 18ին  
ԻՆԷՍՔՕ ի սրահին մէջ  
երեկոյեան 8:30-ին տոմսերը՝  
Trading Places 01 611600, CD-Thèque Ashrafieh - ABC.  
Հանազգային գրախանութ, Նարեկացի գրախանութ  
եւ Ազգային Դպրոցներն

**BYBLOS BANK**

ՓՈԼ ՎՈԼՖՈՎԻՑ ԻՐԱՔԻ ՄԷՋ

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան փոխնախարար Փոլ Վոլֆովից երէկ Իրաք մեկնեցաւ չորսօրեայ այցելութեան մը համար, որուն ընթացքին պիտի շրջի զանազան շրջաններ, ինչպէս նաեւ պիտի այցելէ ամերիկացի զինուորներուն:



Փոլ Վոլֆովից Իրաքէ վերադարձուաւ:

Մուսուլի մէջ երէկ առաւօտեան կանուխ ժամերուն սպանուեցաւ ամերիկացի զինուոր մը, որ պահակ էր հացահատիկի շտեմարանի մը դիմաց: Մուսուլի գործողութենէն քանի մը ժամ առաջ, զինեալներ ռմբակարէցին Պաղատի շուկաներէն մէկը՝ սպանելով հաշմանդամ նպարավաճառ մը եւ վիրաւորելով վեց այլ քաղաքացիներ: Իրաքի ոստիկանապետ մը ըսաւ, որ յարձակումը գործուած է անպիսի մարդոց կողմէ, որոնք չեն ուզեր պահպանութիւնն ու կայունութիւնը: Իսկ Պաղատի մտ Վիրաւորուեցան երկու զինուորներ, երբ ական մը պայթեցաւ անոնց ինքնաշարժին մօտ:

Ֆալլուժայի մէջ աւելի քան հարիւր իրաքցիներ բախում ունեցան ոստիկանութեան հետ: Յուցարարները կը բողոքէին ամերիկեան ուժերուն դէմ, պահանջելով որ անոնք հեռանան Իրաքէն:

ՊԱՐՆԻԷ ԱՒԱՐՏԵՅ ԿԻՊՐՈՍ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

ՆԻԿՈՍԻԱ, 24 (ԱՅՓ). - Եւրոպական Միութեան շրջանային քաղաքականութեան յանձնակատար Միշէլ Պարնիէ ըսած է, թէ կիպրոսի այցելութիւնը զօրակցութիւն արտայայտելու համար է «քաղաքական լուծումի մը», որ կողմից վերամիացման եւ պլոքին կողմէ յաւելելով օժանդակութեան առիթ պիտի տայ:

Ն. Միութիւնը 2004էն 2006 101 միլիոն եւրօ պիտի յատկացնէ կիպրոսի մէջ քաղաքացիներու եւ զինուորական զորքերու համար, կրթական եւ ձկնորսութեան մարզերուն համար:

Պարնիէ յայտնած է, որ եթէ կիպրոսի հարցը լուծուի, թուրք կիպրոսի ընդհանուր 207 միլիոն եւրոյով պիտի օգտուի՝ հարաւին հետ շրջանային տարբերութիւնները նուազեցնելու եւ աւելի հարուստ յունական շրջանին հետ տնտեսական գործակցութիւն քաջալերելու համար:

Պարնիէ տեսակցութիւններ ունեցած է նախագահ Թատոս Փափաճեանի հետ եւ ելեւմուտքի նախարար Մարթոս Քիփրիանուի հետ, ինչպէս նաեւ թուրք կիպրոսի ղեկավարներու հետ:

Պարնիէ յայտնած է, որ եթէ կիպրոսի հարցը լուծուի, թուրք կիպրոսի ընդհանուր 207 միլիոն եւրոյով պիտի օգտուի՝ հարաւին հետ շրջանային տարբերութիւնները նուազեցնելու եւ աւելի հարուստ յունական շրջանին հետ տնտեսական գործակցութիւն քաջալերելու համար:

ԻՐԱՔ ԶՕՐՔ ՌԵՂԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅՈՎ ՌԻԱԶԻՆԿՈՐԸ ԱՌԿԱԽԱԾ Ե ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԳԱՐԱՅԻ ՇԵՏ

ԱՆԳԱՐԱ, 24 (ԱՅՓ). - Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Թալփի էրտողան Ուրբաթ օր ըսած է, թէ Մ. Նահանգներ առկախած են բանակցութիւնները՝ Թուրքիոյ կողմէ Իրաք ուժեր զրկելու առաջարկին դժուար: Ըստ «Էն. թի. Վի.» լրատու գործակալութեան, էրտողան Տաճիկիստան այցելութեան մը ընթացքին թղթակիցներու ըսած է, որ Մ. Նահանգներ որոշ ժամանակ ուզած են, որմէ ետք պիտի շարունակեն բանակցութիւնները:

Ան շեշտած է այսուհետեւ, որ դադարը չի նշանակեր, թէ գործը աւարտած է: Էրտողան ըսած է, որ ուժեր զրկելու ծրագիրը ջնջելու հարց մը պիտի լըլայ Թուրքիոյ համար: «Իրաք զինուորներ զրկելը ռիսք է, պիտի ձեռքադրուի քաղաքացիները», աւելցուցած է ան:

Անգարա արդէն իսկ իր հանրային կարծիքին կողմէ ճնշումներու տակ է՝ Իրաքէն դուրս մնալու համար:

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբերը՝ Ատրմ էրըլի, Հինգշաբթի օր ըսած է, թէ Ուաշինկթըն տակաւին կը յուսայ գտնել այնպիսի լուծում մը, որ բոլոր կողմերը գոհ ձգէ:

Էրտողան Ուրբաթ օր զիտել տուած է, որ Իրաք ուժեր զրկելը պիտի չտկարացնէ Հիւսիսային Իրաքի մէջ միջամտութիւն կատարելու Թուրքիոյ կարողականութիւնը:

Անգարա կը յուսայ, որ Մ. Նահանգներու օժանդակելը Ուաշինկթընը պիտի քաջալերէ, որ ճնշէ Հիւսիսային Իրաք ապստանած հազարաւոր քիւրտերու վրայ: Արդէն իսկ քանի մը հազար թուրք զինուոր կը գտնուի Հիւսիսային Իրաքի մէջ:

ԹԵՐԱՆԻ ՄԷՋ

ԲՈՂՈՔԻ ԶՈՅՅԵՐԻ ՄԱԿԻ ՔՆՆԻՉՆԵՐՈՒՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԶՈՒՅԱԲԵՐՈՒՈՂ «ԹՈՅԼԱՏՈՒ» ԿԵՑՈՒԱԾՔԻՆ ԴԷՄ

ԹԵՐԱՆ, 24 (ԱՅՓ). - Իրանի մայրաքաղաք Թեհրանի մէջ իսլամական հարիւրաւոր ծայրայեղականներ Ուրբաթ օր բողոքի ցոյց մը կատարած են՝ ՄԱԿի քննիչներու կողմէ աւելի խիստ քննութիւններ ընդունելու Իրանի կեցուածքին պատճառով: Անոնք կոչ ուղղած են, որ երկրի քաջուի կորիպային պէնքերու տարածումը կասեցնող համաձայնագիրներ (Է.Մ. Փի.): Ցոյցը յաջորդած է նախկին նախագահ Աքպար Հաշէմի Ռաֆսանձանիի մէկ խօսքին, որ ան չէ կանխարկած Իրանի խոստումին կորիպային Ուժանիւթի Միջպագային Գործակալութեան պահանջներուն տեղի

իրան նաեւ ընդունած է իր գործունէութեան մասին անդրազգային յայտարարութիւն կատարել, ինչպէս նաեւ առկախել իրանի իսլամական ծայրայեղականներու ընդունած էր Է.Մ. Փի. կապուած յաւելելով փրոթոգոյ մը կնքել, ինչ որ քննիչներուն իրաւունք կու տայ անոր կորիպային կեղծումները աւելի խիստ քննութիւններու ենթարկելու:

ՄԻՋԻՆ ԱՐԵԲԵԼԵԻ ՉԻՆԱՅԻ ՅԱՏՈՒԿ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ...

Շարունակուած Ա. Էջէն ար՝ 22 տարուան իսրայէլեան բռնագրաւումէն: Նախագահ Լահուտ ընդգծեց նաեւ, որ Լիբանանի կառչած կը մնայ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի միջազգային որոշումներուն, զիտել տալով, որ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի շրջանը ապակայունացնելու քաղաքականութիւնը չի կրնար առանց հակազդեցութիւններու շարունակել:

Իր կարգին, Ճի Ան շեշտեց, որ շրջանին մէջ կարելի չէ խաղաղութեան գործընթացը յաղթեցնել առանց Լիբանանի ու Սուրիոյ մասնակցութեան: Ան յայտնեց նաեւ, որ Իսրայէլն է շրջանի ապակայունացման պատասխանատուն, կոչ ուղղելով Իսրայէլի վերջ տալու բոլոր այն օրինազանցութեանց, որոնք կը խախտեն միջազգային օրէնքն ու կանոնները:

ԶՈՐԱՅԹԵՍԻ ՄԷՋ

Ճի Ան այցելեց նաեւ Բորայիէմ, ուր ընդունուեցաւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի կողմէ: Հանդիպումին քննարկումի առարկայ դարձան Լիբանան - Չինաստան երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի իրադարձութիւնները: Վարչապետ Հարիրի շեշտեց, որ ամէն ջանք ի գործ պիտի դնէ բարելաւելու համար ամբողջ շրջանին կացութիւնը:

ՄԵՆՏԱԿԱՆ ԱՐԱՐԻՈՅ ՄԷՋ ԶՈՅՅԵՐԸ ԿԸ ՄՆԱՆ «ԿԱՐՄԻՐ ԳԻԾ»

ՌԻԱՏ, (24 ԱՅՓ). - Մենտական Արարիոյ իշխանութիւնները յստակ դարձուցած են, որ հակառակ բարեկարգումներու առնչուող ծրագիրներու, ցոյցերը «Կարմիր գիծ» կը մնան: Անոնք երեք քաղաքներու մէջ աւելի քան 70 ցուցարարներ ձերբակալած են:

Հինգշաբթի օրուան դէպքերը գրեթէ անտեսուած են Ուրբաթ օրուան թերթերուն կողմէ, որոնց մէկ քանին միայն պաշտօնական կեղծուցումներ տուած է ցոյցի փորձերուն մասին:

«Կրօնական իշխանութիւնները եւ կառավարութիւնը միասնաբար կ'ընդդիմանան ցոյցերուն. առաջիններուն կարծիքով անոնք կ'ապակայունացնեն ընկերութիւնը, իսկ կառավարութիւնը կ'ըսէ, թէ արտայայտութեան այլ միջոցներու գոյս կը բանայ», ըսած է մեկնաբան մը:

Երկրին Դատական Գերագոյն Խորհուրդին նախագահ շէյխ Մալէկ Պըն Մուսալէտ Լուհայտան, Հինգշաբթի օրուան ցոյցի փորձերէն առաջ ըսած է, որ իշխանութիւններուն պարտականութիւնն է ընդդիմանալ նման գործունէութեան:

Չինգշաբթի յետմիջօրէին, ապահովութեան ուժերը աւելի քան 70 ցուցարարներ ձերբակալած են՝ Լոնտոն գտնուող Արարիոյ մէջ իսլամական Բարեկարգումի Շարժումին առաջարկով տեղի ունեցող ցոյցերը կասեցնելու ընթացքին:

Ճետտայի մէջ ձերբակալուած են շուրջ 50 անձեր, որոնց կարգին 5 կիներ, 13 այլ անձեր ձերբակալուած են Ռիատի հիւսիսային շրջանին մէջ եւ առնուազն 10 հոգի՝ Տամամի մէջ:

Մայրաքաղաքին մէջ, մեծ թիւով ոստիկաններ հաստատուած են մզկիթի մը շուրջ, որ մեկնակէտը պիտի ըլլար ցոյցին, որ տեղի չէ ունեցած:

Ըստ պաշտօնական «Էս. Փի. էյ.» լրատու գործակալութեան, հաւաքներուն մասնակիցները «հարցաքննութեան կ'ենթարկուին» եւ պիտի դատուին:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՊԻՏԻ ՌԵՂԱՐԿԵ ՄՈՍԿՈՒԱ

ՄՈՍԿՈՒԱ, 24 (ԱՅՓ). - Եւրոպական Միութիւնը Ուրբաթ օր յայտարարած է, թէ յառաջիկայ շաբաթ բարձրաստիճան պատուիրակութիւն մը պիտի ղրկէ Մոսկուա, այս ամսուան Չեչենիայի նախագահական վիճելի ընտրութիւններուն մասին տեղեկութիւններ քաղելու համար:

Ինքնաշարժի նաեւ ուղին պիտի հարթէ Հոսի մէջ Նոյեմբեր 6ին կայանալիք Ռուսիա-Ե. Միութիւն վեհաժողովին:

Պատուիրակութեան մաս պիտի կազմեն Իտալիոյ եւ Իրլանտայի արտաքին գործոց նախարարները, ինչպէս նաեւ ընդարձակման հարցերու յանձնակատար Կուրթըր Վերիֆոլըն եւ արտաքին քաղաքականութեան պատասխանատու Խաւիէ Սոլանա:

Ռուսիա խիստ քննադատութիւններու ենթարկուած էր Հոկտեմբեր 5ի ընտրութեանց իր վերաբերմունքին համար: Ռուսաւորտ թեկնածու Անիէտ Քատիրով ջախջախիչ համեմատութեամբ յաղթական դուրս եկած էր ընտրութիւններէն:

Large advertisement for 'AZTAG' featuring a grid of images showing people and products, with text in Armenian and English. The main headline is 'AZTAG' in large letters. Below it, there are several smaller images and text blocks describing different products or services offered by the company.

Advertisement for 'AZTAG' featuring a large image of a woman and text in Armenian and English. The text describes a 'Down Town' collection of clothing and accessories, including a 'Box Office' brand. It provides contact information for the store in Bishkek, Kyrgyzstan.